Հայ-Ռուսական համալսարանի ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության

063 մասնագիտական խորհրդին

(Հասցե 0051, Հայաստանի Հանրապետություն,

ք. Երևան, Հովսեփ Էմինի փողոց, 123)

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԵՎԳԵՆԻԱ ԷԴՈՒԱՐԴԻ ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆԻ

<<ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԻՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ԳԵՆԵԶԻՍԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ>>

թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Եվգենիա Էդուարդի Գյանջումյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է քաղաքացիական իրավունքի գիտության և պրակտիկայի կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ սահմանափակ իրային իրավունքների համակարգի ձևավորման առանձնահատկություններին, դրանց գենեզիսին, տեսակներին և ժամանակակից զարգացման արդի հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Քննարկվող ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում և Ռուսատանի Դաշնությունում սեփականության իրավունքի և սահմանափակ իրային իրավունքների սրընթաց զարգացմամբ, ինչպես նաև դրանց հետ կապված իրավահարաբերությունների, այդ թվում՝ գործարքների թվի աճով:

Սեփականության իրավունքի և սահմանափակ իրային իրավունքների ուսումնասիրությունը և զարգացման ժամանակակից միտումների հետազոտությունները չափազանց կարևոր են, քանի որ գիտական և տեսական մակարդակում արված եզրահանգումները կարող են կարևոր դեր ունենալ և նպաստել սահմանափակ իրային իրավունքների օրենսդրական կարգավորումների հետագա կատարելագործմանը:

Ատենախոսության բովանդակությունը վկայում է այն մասին, որ հեղինակն ուսումնասիրել է թեմային առչնվող մեծածավալ մասնագիտական գրականություն, վերլուծել վերաբերելի դատական պրակտիկան, ինչպես նաև ուսումնասիրել թեմային առչնվող ՀՀ, Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների օրենսդրությունը:

Պաշտպանության ներկայացված ատենախոսության հիմնական նպատակն է իրային իրավունքի և սահմանափակ իրային իրավունքների էության խորը և համալիր գիտական իմաստավորումը, դրանց նշանակության ուսումնասիրությունը իրավակիրառ պրակտիկայում:

Հեղինակը հետազոտական աշխատանքում խնդիր է դրել դիտարկել սահմանափակ իրային իրավունքների էությունը և հիմնական առանձնահատկությունները, վերլուծել իրային իրավունքների հայեցակարգը, սահմանափակ իրային իրավունքների բնույթը և տեսակները, համապարփակ վերանայել և նորովի ձևակերպել իրային իրավունքների համակարգը Հայաստանի Հանրապետության ժամանակակից քաղաքացիական օրենսդրության շրջանակներում: Հեղինակը դուրս է բերել սահմանափակ իրային իրավունքների դասակարգման հիմնական էական չափանիշները, ձևավորել եզրահանգումներ, ներկայացրել գործնական բնույթի առաջարկություններ:

Գիտական ատենախոսությունն ունի գիտականորեն հիմնավորված և տրամաբանական կառուցվածք, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրափակիչ մասից, և օգտագործված գրականության ցանկից: Ներածությունում հեղինակը ներկայացրել է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, ատենախոսության գիտական նորույթը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական թեզերը: Ատենախության առաջին գլուխը նվիրված է սահմանափակ իրային իրավունքների կայացման և պատմական զարգացման հարցերին, որում մասնավորապես, անդրադարձ է կատարվել իրային իրավունքների կայացման պատմական հարադրություններին, արտասահմանյան երկրներում իրային իրավունքների ընդհանուր նկարագրին: Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է իրային իրավունքների և սահմանափակ իրային իրավունքների ընդհանուր իրավական էությանը, որում հետազոտվել են իրային իրավունքների բնորոշման իրավական հիմնահարցերը, իրային իրավունքների և սահմանափակ իրային իրավունքների համակարգի կառուցվածքը: Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է սահմանափակ իրային իրավունքների համակարգի ձևավորման արդի հիմնախնդիրներին, որում հեղինակը անդրադարձել

է սահմանափակ իրային իրավունքների ՀՀ օրենսդրական կարգավորումներին, ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ ամրագրված իրային իրավունքներին:

Բարձր գնահատականի են արժանի Եվգենիա Գյանջումյանի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները (թեզերը), որոնք անկասկած ապահովել են ատենախոսության գիտական նորույթը: Հարկ է նշել, որ աշխատանքում տեղ գտած առաջարկությունները և հետևությունները հիմնավորված են, առանձնահատուկ և տրամաբանորեն փաստարկված: Հատկապես, բարձր գնահատականի է արժանի հեղինակի կողմից մշակված չափանիշների խումբը, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս հատկորոշել իրային իրավունքները որպես այդպիսին և տարբերակել դրանք քաղաքացիական այլ իրավունքներից:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են կիրառվել ինչպես օրինաստեղծ, այնպես էլ իրավակիրառ բնագավառներում, քաղաքացիական իրավունքի հատուկ դասընթացների դասավանդման ժամանակ:

Ատենախոսության ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և նորույթ հանդիսացող դատողություններ անելու ունակություն: Բացի այդ, ակնհայտ է հեղինակի պատշաճ տեղեկացվածությունը՝ ատենախոսության թեմային առնչվող տեսական աղբյուրների, հեղինակավոր գիտնականների տեսակետների, դատական պրակտիկայի և միջազգային լավագույն փորձի վերաբերյալ:

Ատենախոսության կառուցվածքը, ծավալը և ձևավորումը համապատասխանում են Բարձրագույն Որակավորման Կոմիտեի կողմից սահմանված պահանջներին:

Եվս մեկ անգամ փաստելով, որ կատարվել է մեծածավալ և համապարփակ գիտական վերլուծական աշխատանք, այնուհանդերձ, կարծում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնց վերաբերյալ ստորև ներկայացնում ենք մեր նկատառումները.

1. Հեղինակի կողմից առաջարկվում է իրային իրավունքների այն սահմանումը, համաձայն որի «իրային իրավունքը» անձի նորմատիվորեն ամրագրված բացարձակ իրավունքն է անհատապես որոշվող գույքի նկատմամբ, որն արտահայտվում է անձին՝ օրենքով իրային իրավունք տրամադրելով, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումը, տիրապետումը և օտարումը որոշակի կառուցակարգերով, որի սահմանները ամրագրվում են օրենքով (էջ 8): Այնուհետ

ատենախոսությունում (էջ 9, 110) հեղինակը առաջարկում է իրային իրավունքների սահմանման պայմանագրային մոդելը, որով կարող են սահմանվել իրային իրավունքներ: Հեղինակը ձևակերպել է պայմանագրի հետևյալ սահմանումը՝ սահմանափակ իրային իրավունքի սահմանման պայմանագիրը քաղաքացիական պայմանագրի տեսակ է, որի համաձայն մեկ կողմը՝ մյուս կողմին տրամադրում է գույքի տիրապետման և/կամ օգտագործման և/կամ օտարման իրավունքներ՝ վճարովի կամ անհատույց հիմունքներով, իսկ մյուս կողմը պարտավորվում է, սահմանված պայմաններին համապատասխան տիրապետել և/կամ օգտագործել և/կամ օտարել այն:

Մեր կարծիքով, հեղինակի կողմից առաջարկվող պայմանագրի բնորոշումը կարիք ունի լավարկման, քանի որ այն չի կապակցվում տրամադրվող սահմանափակ իրային իրավունքի տեսակի հետ: Պայմանագրային կարգով՝ իրավատիրոջ կողմից իրեն պատկանող գույքի նկատմամբ երրորդ անձանց սահմանափակ իրային իրավունք տրամադրող պայմանագրերը՝ հանդիսանալով իրային իրավունքի առաջացման հիմք, կարծում ենք, որ պետք է էական պայման պարունակեն տրամադրվող սահմանափակ իրային իրավունքի տեսակի վերաբերյալ, ինչն էլ առավել հստակ կդարձնի պայմանագրի բովանդակությունը:

2. Հեղինակը անդրադարձել է իրային իրավունքների՝ օրենքով սպառիչ ցանկ նախատեսելու կամ այդ ցանկը ոչ սպառիչ կերպով նախատեսելու խնդրին, որի շրջանակներում հայտնել է տեսակետներ, որոնք մեր համոզմամբ, լրացուցիչ պարզաբանման կամ հիմնավորման կարիք ունեն: Մասնավորապես, նշվում է, որ <<անցումային շրջանում իրային իրավունքների սպառիչ ցանկ ամրագրելը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի բազմաթիվ տեսական և գործնական խնդիրներ լուծելու պարզ (տրիվիալ) միջոց>> (էջ 69), մինչդեռ, մեր կարծիքով, ատենախոսության մեջ հեղինակը բավարար չափով չի մեկնաբանել իր այս տեսակետը: Ցանկալի է, որպեսզի հեղինակը լրացուցիչ պարզաբանի իր այս տեսակետը: Բացի այդ, հեղինակը, կարծիք է արտահատել, համաձայն որի կտրուկ անցումը դեպի իրային իրավունքների բաց ցանկ (ոչ սպառիչ ցանկ) սահմանելուն, կարող է հանգեցնել տնտեսական զարգացման դանդաղման: (էջ 69): Մեր կարծիքով, տնտեսական զարգացման հնարավոր դանդաղման մասին հեղինակի պնդումը կարիք ունի լրացուցիչ հիմնավորման:

3. Հեղինակը տեսակետ է հայտնում, որ ներկայումս ճիշտ է ունենալ սահմանափակ իրային իրավունքների օրենքով սահմանված սպառիչ ցանկ, սակայն ատենախոսության մեջ բազմիցս թվարկում է իրային իրավունքներ, որոնք՝ թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված չեն որպես սահմանափակ իրային

իրավունքներ, այնուհանդերձ դրանք կրում են իրային բնույթ և կրում են իրային իրավունքների չափանիշները: Մասնավորապես, հեղինակը իրավացիորեն նշում է, որ իրային իրավունքների չափանիշներին համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1213-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կտակարարի կողմից արված կտակային հանձնարարության հիման վրա ծագած անձի՝ բնակելի տան կամ բնակարանի ցման օգտագործման իրավունքը (էջ 86):

Վկայակոչելով այլ սահմանափակ իրային իրավունքների առկայությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, հեղինակը, մեր կարծիքով այդ կերպ փաստում է դրանց պահանջված լինելը: Հետևաբար, մեր կարծիքով, որոշակի հակասություն կա այս արձանագրումների և հեղինակի կողմից նախորդիվ արտահայտված՝ իրային իրավունքների սպառիչ ցանկ սահմանելու դիրքորոշման միջև:

4. Խոսելով կառուցապատման իրավունքի, որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված իրային իրավունքի մասին, հեղինակն իրավացիորեն նշում է, որ անհրաժեշտ է տարբերակել կառուցապատման իրավունքը և շինարարության իրականացման թույլտվությունից, քանի որ առաջինը ծագում է բացառապես պայմանագրի հիման վրա և ենթակա է պարտադիր նոտարական վավերացման, իսկ դրանից բխող իրավունքը ենթակա է պետական գրանցման, իսկ երկրորդ դեպքում, գործ ունենք վարչական ակտի՝ շինարարական թույլտվության հետ (էջ 75): Մեր կարծիքով, նշված տեսակետը պահանջում էր նաև ներկայացնել պնդում թվարկված երկու իրավունքների՝ մեկը մյուսին փոխկապակցված լինելու մասին, քանի որ առանց թույլտվության (վարչական ակտի) չի կարող իրականացվել շինարարություն հողի վրա, մյուս կողմից՝ շինարարության իրականացման թույլտվություն չի կարող տրամադրվել, եթե սուբյեկտը չունի իրավունք (կառուցապատման, օգտագործման, կամ այլ) տվյալ հողատարածքի նկատմամբ: Այլապես, հեղինակի կողմից արտահայտված տեսակետը մնում է մինչև վերջ չպարզաբանված:

5. Հեղինակն իրավացիորեն անդրադարձել է 1998թ. ՀՀ քաղաքացիական օրենսդրության ընդունմամբ սկիզբ առած մի հարցի, որը, մեր համոզմամբ, ոչ այնքան բովանդակային, որքան տերմինաբանական հարց է ՀՀ քաղաքացիական օրենսդրության համար: Հարցը վերաբերում է <<Գույք>>, <<գույքային իրավունք>>, <<իր>> <<իրային իրավունք>> եզրույթներին և դրանց կիրառական իմաստներին: Մեր համոզմամբ, այս խնդիրը, որին անդրադարձել է հեղինակը, պայմանավորված է հայոց լեզվում՝ "вещь", "вещное право" ռուսերեն եզրույթների համարժեք թարգմանության և հոմանիշների բացակայությամբ (մասնավորպես՝ "вещь", "вещное право", "имущество" и "имущественное право"), որն էլ հանգեցրել է

հեղինակի կողմից արձանագրված խնդրին՝ տերմինաբանական շփոթության (էջ 118):

Հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ նկատառումները կրում են բանավիճային բնույթ և բոլորովին չեն նվազեցնում ատենախոսության արժանիքները:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ Եվգենիա Էդուարդի Գյանջումյանի «Սահմանափակ իրային իրավունքների համակարգի ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում՝ գենեզիսը, տեսակները և ժամանակակից զարգացումը» թեմայով ԺԲ.00.03 -«Մասնավոր իրավունք» (քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ամբողջական գիտական հետազոտություն է, լիովին համապատասխանում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքներին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հայ-Ռուսական համալսարանի

Իրավունքի ինստիտուտի ավագ դասախոս,

իրավաբանական գիտությունների թեկնածու **Ա.Ա. Մանուկյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի ինստիտուտի ավագ դասախոս Ա.Ա.Մանուկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Հայ-Ռուսական համալսարանի

Գիտական քարտուղար՝ Ռ.Ս. Կասաբաբովա

Բ.գ.թ.

26.05.25թ.